ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1.	Անունը, ազգանունը. **Արմեն Ղազարյան**
2.	Զբաղեցրած պաշտոնը. **ՀՀ ՏԿԶՆ միգրացիոն ծառայության պետ**
3.	Գործուղման վայրը և ժամկետները. **2018 թվականի դեկտեմբերի 10-12**
4.	Հրավիրող կողմը. **ՄԱԿ**
5.	Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը). **Մասնակցություն Միգրացիայի գլոբալ դաշնագրի ընդունման համաժողովին**
6.	Քննարկված թեմաները. **Համաժողովի հիմնական թեման Միգրացիայի գլոբալ դաշնագրի ընդունումն էր ՄԱԿ-ի անդամ պետությունների կողմից: Համաժողովի անցկացումից առաջ մի շարք պետություններ (հիմնականում եվրոպական պետություններ և ԱՄՆ-ն) հայտարարել էին, որ չեն միանալու դաշնագրին՝ հաշվի առնելով իրենց երկրներում առկա հակամիգրանտական տրամադրությունները: Այս համատեքստում ելույթ ունենալով՝ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշը շեշտեց, որ դաշնագիրը որևէ կերպ չի սահմանում «միգրացիային դիմելու իրավունք» կամ որևէ կերպ արտոնություն չի տալիս միգրանտներին այդ քայլին դիմելու: Նրա խոսքով՝ դաշնագիրը հիմնականում ուղղված է միգրացիայի կարգավորմանը, ինչը արտացոլված է նաև դաշնագրի անվանման մեջ «Անվտանգ, օրինական և կանոնավոր» միգրացիայի մասին:** **Ելույթ ունեցողների թվում էր նաև Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը, ով ևս կարևորեց դաշնագրի ընդունումը և նշեց, որ այն չունի իրավականորեն պարտադիր բնույթ կատարման համար: Ռուսական կողմը համաժողովին ներկայացված էր ՆԳՆ միգրացիայի գլխավոր վարչության պետի տեղակալի մակարդակով, սակայն գլխավոր դեբատի ընթացքում ելույթ ունեցավ Մարոկկոյում ՌԴ դեսպանը, ով շեշտեց, որ ՌԴ-ն կողմ է դաշնագրին, սակայն ունի մի շարք վերապահումներ, մասնավորապես «պատասխանատվությունը կիսելու» գաղափարի առնչությամբ, քանի որ կարծում է, որ այն պետությունները, որոնք պատճառ են դարձել միգրացիոն մեծ հոսքերի, պետք է ավելի շատ պատասխանատվություն կրեն, քան մյուսները:** **Դաշնագրի իրավական պարտադիր բնույթ չունենալու միտքը շեշտադրվել է գրեթե բոլոր բանախոսների կողմից: Դաշնագիրը սահմանում է միգրացիայի ոլորտում 23 հիմնական ուղղություններ-նպատակներ, որոնց իրագործմանը պետք է ձգտեն**

	պետությունները: Դրանք գործում են ավելի շոտ որպես ուղենիշեր, քան պարտադիր կանոններ: Դաշնագրի կենսագործման նպատակով ՄԱԿ-ի կառույցների շրջանակներում ստեղծվել է միգրացիոն խնդիրները համակարգող ցանց, որի քարտուղարությունը վերապահվել է Միգրացիայի Միջազգային կազմակերպությանը:
7.	Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը. Համաժողովի ընթացքում ելույթ եմ ունեցել և ներկայացրել Հայաստանի տեսակետները դաշնագրի առնչությամբ: Ելույթի հետ կապված նախնական աշխատանքներ են տարվել արտաքին գործերի նախարարության հետ (ելույթի տեքստը անգլերեն լեզվով կցվում է): Ելույթի նախնական տեքստում անդրադարձ չի եղել Ադրբեջանից բռնագաղթված փախստականներին, սակայն ինձանից առաջ ելույթ ունենալով, Ադրբեջանի ներկայացուցիչը բարձրացրել էր «Ադրբեջանի ներքին տեղահանված անձանց» խնդիրները, ուստի այդ առնչությամբ ելույթում ավելացվել է Ադրբեջանում էթնիկ զտումների հետևանքով Հայաստան բռնագաղթված փախստականների հարցը: Ելույթում նաև լայն անդրադարձ է կատարվել Սիրիայից բռնագաղթվածների խնդիրներին, ինչի առնչությամբ հետագայում Սիրիայի ներկայացուցիչն իր գնահատանքն է հայտնել: Մասնակցել եմ նաև համաժողովին զուգահեռ ընթացքող մի շարք հանդիպում-քննարկումներին: Մասնավորապես, ՄԱԿ ՓԳԸ և Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակների համատեղ կազմակերպած քննարկման ժամանակ անդրադարձ եմ կատարել սիրիահայերի հիմնախնդիրներին: Շեշտադրվել է, որ անկախ իրավական կարգավիճակից լինում են դեպքեր, երբ անձինք գտնվում են «փախստականի նման իրավիճակում» սոցիալական (refugee like situations) տեսանկյունից, ուստի միջազգային կազմակերպությունների աջակցությունն այս պարագայում չպետք է կասեցվի: Առանձին քննարկումներ եմ ունեցել ՌԴ ՆԳՆ միգրացիայի գլխավոր վարչության պետի հետ կապված ՌԴ-ում հայ միգրանտների մուտքի արգելքների հետ, մասնավորապես, նշել եմ, որ անհրաժեշտ է մեր ծառայության և ՌԴ միգրացիոն մարմնի միջև ստեղծված մեխանիզմում ավելացնել նաև մուտքի արգելքի պատճառն ու ժամկետը: Ժամկետի շուրջ ստացվել է դրական դիրքորոշում: Նիդերլանդների արդարադատության նախարարության միգրացիայի հարցերով պետնախարարին շնորհակալություն եմ հայտնել Հայաստանում ապաստան հայցողների նոր կացարանի կառուցման հարցում ցուցաբերած օժանդակության համար: Պետնախարարը խոստացել է հաջորդ տարվա ընթացքում այցելել Հայաստան և քննարկել նաև Հայաստան վերադարձող միգրանտների վերաինտեգրման ծրագրերին օժանդակության նոր հնարավորությունները:
8.	Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

	Համաժողովի ընթացքում ընդունվել է ՄԱԿ-ի գլոբալ դաշնագիրը:
9.	Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.
10.	Ստորագրությունը, ամսաթիվը: 17.12.2018թ.